ՄԱՍ Ա: «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՊ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի ներդրման նպատակն է բարելավել տուբերկուլոզի համաճարակաբանական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում՝ հիվանդացության և տուբերկուլոզից մահացության, տուբերկուլոզի կայուն ձևերի զարգացման աճի իջեցման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացումը հանդիսանում է «Հազարամյակի մարտահրավերների» գերակա խնդիրներից մեկի՝ աղքատության վերացման ևս մեկ նախապայման:

Այս ծրագրում հաշվի են առնված ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող, տուբերկուլոզը կասեցնելու նպատակով մշակված միջազգային ռազմավարությունում և պլանում (Ստոպ ՏԲ ռազմավարություն և Ստոպ ՏԲ գոբալ պլան) տեղ գտած հիմնական ուղղություններն ու գործունեության տարրերը, ինչպես նաև՝ տուբերկուլոզով հիվանդներին օգնություն տրամադրելու միջազգային չափանիշները: «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի նպատակներն են՝

1. Առաջնային բժշկական օգնության ծառայության ներգրավման միջոցով բարձրացնել տուբերկուլոզի որակյալ ախտորոշման և բուժման մատչելիությունը բոլոր մարզերում և Երևան քաղաքում
2. Բարձրացնել ՏԲ ախտորոշման որակը՝ հզորացնելով լաբորատոր ցանցը
3. Բարձրացնել ամբուլատոր պայմաններում բուժվող հիվանդների բուժման հետևողականությունը՝ տրամադրելով սոցիալական աջակցություն և իրականացնելով ՏԲ ուսուցողական ծրագրեր
4. Իջեցնել տուբերկուլոզի նկատմամբ խարանը՝ օգտագործելով լրատվական միջոցները և ուսուցողական արշավները
5. Ապահովել դեղակայուն տուբերկուլոզով հիվանդների որակյալ ախտորոշումը և բուժումը՝ ներդնելով ԴՈԹՍ-ՊԼՅՈՒՍ ծրագիրը քաղաքացիական և բանտային հատվածներում
6. Ապահովել ՏԲ/ՄԻԱՎ համատեղ գործողությունների իրականացումը բանտային և քաղաքացիական հատվածներում

7. Բարելավել տուբերկուլոզի դեմ պայքարի ծրագրի կառավարումը Առողջապահության, Արդարադատության և Պաշտպանության նախարարությունների ներքո
8. Հզորացնել ԴՈԹՍ ծրագիրը բանտային համակարգում

Ծրագրի ներդրման ակնկալվող արդյունքներն պետք է արտացոլվեն ինչպես ախտորոշման, բուժման և այլ բժշկական ու կազմակերպչական միջոցառումների արդյունավետության վրա, այնպես էլ տուբերկուլոզի բնագավառում համաճարակային իրավիճակի բարելավման վրա:

ՄԱՍ Ա: «ԴԵՂՈՐԱՅՔԱԿԱՅՈՒՆ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի միջև 2009 թվականի օգոստոսի 14-ին կնքված «Դեղորայքակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի ռազմավարությունն է կրճատել տուբերկուլոզի բեռը Հայաստանի Հանրապետությունում՝ ընդլայնելով դեղակայուն տուբերկուլոզի կառավարումը: Ծրագիրը կապահովի դեղակայուն տուբերկուլոզի ախտորոշման և բուժման համընդհանուր մատչելիությունը Հայաստանի բնակչության համար: Նշված ռազմավարության իրականացման նպատակով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամը տրամադրել է դրամաշնորհը վերջինիս կողմից նախօրոք հաստատված նպատակներով և յուրաքանչյուր նպատակի համար հաստատված և սահմանված գործողությունների ցանկով: «Դեղորայքակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի նպատակներն են՝

Դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ոլորտում ազգային կարողությունների հզորացում

Ազգային ռեսուրսների և կարողությունների զարգացման նպատակով արտասահմանում կանցկացվեն բժիշկ մասնագետների վերապատրաստումներ, որից հետո կանցկացվեն տեղային վերապատրաստումներ այն բուժաշխատողների համար, ովքեր

կընդգրկվեն IV կատեգորիայով տուբերկուլոզի բուժման գործընթացի մեջ, տուբերկուլոզի կանխարգելման և բուժման մեջ ներգրավված բժշկական հաստատությունների ինֆրակառուցվածքի բարելավում:

Դեղազգայունության հետազոտություն և դեղակայուն տուբերկուլոզի դեպքերի ախտորոշում

Հայաստանում դեղազգայունության հետազոտության համակարգի ստեղծում՝ խորխի շաբաթական տեղափոխում բոլոր պերիֆերիկ լաբորատորիաներից Ազգային Ռեֆերենս Լաբորատորիա ցանքսի և դեղազգայունության համար, նմուշների ճիշտ պահպանման և տեղափոխման նպատակով սառցե շղթայի սարքավորումների գնում ՏԲ լաբորատորիաների ցանցի համար

Դեղակայուն տուբերկուլոզի դեպքերի բուժում

Քաղաքացիական հատվածում բուժումը իրականացվելու է ստացիոնար հիմքերի վրա Հանրապատական հակատուբերկուլոզային դիսպանսերի դեղակայուն տուբերկուլոզի բաժանմունքում և շարունակվելու է ամբուլատոր հիմքերի վրա մասնագիտացված ՏԲ ծառայություններում, իսկ բանտային հատվածում բուժման ողջ կուրսը կհսկվի Կենտրոնական բանտային հիվանդանոցի հատուկ բաժանմունքում: 2-րդ շարքի հակատուբերկուլոզային դեղերով ապահովում Կանաչ Լույսի Կոմիտեի հատուկ մեխանիզմի միջոցով:

Դեղակայուն տուբերկուլոզով հիվանդների աջակցության ծրագիր

Հիվանդների բուժման հետևողականությունը ապահովելու նպատակով տեխնիկական աջակցության տրամադրում, հիվանդներին սոցիալական և հոգեբանական աջակցության տրամադրում:

ՄԱՍ Ա: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ՀԱԿԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակներ և խնդիրներ

Հայաստանի Հանրապետությունում 2007-2011թթ. ազգային ռազմավարական պլանի համաձայն՝ սույն ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածվածությունը 5%-ից: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է՝

- նվազեցնել ՄԻԱՎ-ի փոխանցումը և պահպանել ցածր տարածվածություն բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի և 15-24 տարեկան երիտասարդների շրջանում,
- բարելավել խնամքը, աջակցությունն ու բուժումը, ներառյալ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելումը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար,
- ընդլայնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին բազմաոլորտային հակազդման ռազմավարության շարունակական զարգացման համար բարենպաստ միջավայրը:

Առաջարկված միջոցառումների հիմնական արդյունքներն ուղղված են՝

- թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ-ների) շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության նվազեցմանը 5%-ից,
- մարմնավաճառների, տղամարդկանց, որոնք սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ (SUS) և քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության պահպանմանը մինչև 2 %,
- բոլոր առողջապահական հաստատություններում կամավոր խորհրդատվության և հետազոտության (ԿԽՀ) ծառայությունների ընդգրկման ապահովմանը,
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 75-100%-ի համար հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժման և օպորտունիստական վարակների կանխարգելման ծառայությունների հասանելիության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, ընթացիկ խնամքի ու աջակցության ապահովմանը:

<u>Միջոցառումներ</u>

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝ ուղղված վերոնշյալ նպատակների ու խնդիրների ապահովմանը:

<u>Կանխարգելում</u>

Ընդլայնել վնասի նվազեցման միջոցառումները, ընդլայնել և հզորացնել ԿԽՀ ծառայությունները, մասնավորապես բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում, հզորացնել և բարելավել բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի և երիտասարդների շրջանում վարքագծի փոփոխմանն ուղղված հաղորդակցման ծրագրերը, ընդլայնել բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերին պահպանակներով ապահովման ծրագրերը, ստեղծել առողջապահական համակարգի ներուժ՝ բարելավված

կանխարգելիչ առողջապահական ծառայություններ, ներառյալ սեռավարակների բուժում և հոգեբանասոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով:

Բուժում և խնամք

Մեծացնել ՀՌՎ բուժման, բուժման մոնիտորինգի, օպորտունիստական վարակների կանխարգելման և բուժման հասանելիությունը, ընդլայնել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և նրանց ընտանիքի անդամներին ուղղված խնամքի և աջակցության ծրագրերը, ինչպես նաև իրականացնել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ծրագրեր:

Բարենպաստ միջավայր

Պետական գործընկերների համար հակազդման գործում ադվոկացիայի և ղեկավարման ներուժի զարգացման ծրագրեր, ներուժի զարգացման և խարանի նվազեցման ծրագրեր բուժաշխատողների համար, ներուժի զարգացում և աջակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի վրա առավել արդյունավետ ներազդելու և հասարակական կազմակերպությունների առավել արդյունավետ ղեկավարման համար, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման առավել արդյունավետ համակարգերի ստեղծում:

Շահառուներ

Սույն ծրագրում նշված հիմնական շահառուներն են ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ներառյալ ՄԻԱՎ-ով վարակված հղի կանայք և նրանցից ծնված երեխաները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները, ԹՆՕ-ները, մարմնավաճառները, SUS-ները, քրեակատարողական հիմնարկներում գտնվողները, տեղաշարժվող բնակչությունը, 15-24 տարեկան երիտասարդները: